

Միրավան Սևունի




Լազարևսկ - 2012

С. Севуни.

Частушки: сборник частушек на армянском языке /С. Севуни –Лазаревское, 2012. – 120 стр.

Ժողովածուն պարունակում է համշենի բարբառով և գրական լեզվով մնիներ, ինչպես նաև չափածո զվարճալի մենախոսություններ: Մնին համարվում է համշենական հարսանիքների զարդը, որը սրապարի եղանակով, հաճախ հումորով, միմյանց դեմ երգում են պարողները և իրարից չեն վիրավորվում: Դրանք արտահայտում են անձնական, սոցիալական, քաղաքական, տնտեսական մոտիվներ:



Մ Ն Ի Ն Ե Ր

ՆԱԽԵՐԳ

Աս կրկին մեչ մնի ին,
Սրաքարի հոմար ին,
Քամանչաճի, չալա տուն,
Բարը հոնա ալլայնուն:

Ծեռկա բռնաձ մեգ-մեգու
Սրաքարը թնդա տող,
Վեվ օր թմիգ քարա գու,
Հայսը ճակդն քակնա տող:

Մնին կուկա հոկուծըն,
Օնուշ խոսկեր ասողնուն,
Ընճաղ ծընը քամանչին
Ներ ուժ գուդա քարողնուն:

Ըմրն հայսնիկ համշենձեձ
Չաղգեցնա գու քամանչըն,
Ծընն էշտա տող սար ու ձեր,
Էլեկ պացեկ փնճարըն:



Հայսն ալ մեմը տող բարա
Սրաբարը բաբագան,
Ծեռկը դվեկ բոլ փարա,
Միր ախճիգն ա բադվագան:

Օնտը տրեկ մոնչ դդա,
Թալիգնուն հեդ տող խաղա,
Միրով մնոն մաշտուն հեդ,
Աշխարհ պերին դոչ դդա:

Գրագ շոկուն, տա ցրյդին
Մնին հայսնեժ հոկին ա,
Ջընն օր գնգա քամանչին,
Սրաբար ա, տուն նեդվա:

Միր փեսածուն օդի ա,
Հայսը մեճկին՝ գողի ա,
Համշենական հայսնիկը
Միգալնեճնուն լոտի ա:

Դե, հայսնիկը նահրեծակ,
Քամանչաճի, չալա տուն,
Խաղոնկ բիդի, քեյֆ ընինկ
Հնճուկ էկուց իրիգուն:

Բախճա ունիմ բդղադու,
Մեճը՝ դայմա մի գադու,
Միր կեղածի ախճգընին
Հըմ օնուշ ին, հըմ՝ թթու:

Մանուշն էլավ ներ կնաց,
Դոնը տուռը պաց մնաց,
Ընու էդվոնճ պգելըն
Հալ ու հոկի չմնաց:

Սարը մննակ կնածի,
Շաշուրմեծի, մնածի,
Այճը տեմըս օր էլավ,
Օնգոճն ի վար ջղածի:

Ալիք-ալիք ճուր կուկա,
Զայտարը միր դուր կուկա,
Դեսնելուն բես փաթթվի,
Օնուշ-օնուշ բաճ գուդա:

Ջինջիտուկ ծառին թառի գու,
Սիդրս վրադ հալի գու,
Աճկս դայմա քու ճոմպուն,
Բեդ ընելըն վառի գու:

Թաթավ կուկա՝ վերճ չիկա,
Ներ ալ աշիմ՝ բերթ չիկա,
Դոնըդ յոնը մոն կուկոմ,
Վախըմ ինձի հերթ չիկա:

Դնըն էլլար ախուվախ,
Հեռոդ էլաճ, քինթոդ՝ գախ,
Չոպը չոպին չտըրաճ,
Ինչն կուզիս ինձմն իսախ:

Ծուն նստած ա Մասիսին,
- Հայդի, - աստի, Մինասին,-
Էշտոնք գոյնինք գագաթին,
Թքնինք թուրքի թասիբին:

Հայսնիկ արին՝ հայս պերին,
Կուչկա-կուչկա ծախս արին,
Հայսը պերոնն օր պածավ,
Էլոն ախուվախ արին:

Դունը կոկոմ դայմա ուշ,
Ջոմպա չին դալ ախճկրնին,
Ես չիմ ուզիլ գարկըվուշ,
Մուր ու ներգ ին աճվնին:

Ձառին ջուխկին թեր մը գա,
Ալլայ բերկին դեր մը գա,
Ադ ըղածը լըլուշի
Դերայի մեծ փեր մը գա:

Ջոմպն էլա ես սարի,
Աստի ժողվիմ դոնձ վարի,
Հուն ախճիգ մը ես դեսա,
Միդս եդվոնձը գարի:

Այդին լազդը գրեծի,
Քասուկ երկ մը կրեծի,
Միր նախակին քուրեճը
Խավվուտ-խավվուտ սիրեծի:

Միր Հայիգը բիզնեսմեն
Վիրա շվի ծախսա գու,
Վեվ օր խոսի ուրին տեմ,
Շվին պեյնն գախսա գու:

Հայիգին բես գործարար
Ներ ալ էշտաս չիս կոնուլ,
Երբեք ընիլ չի գարար,
Քոնի լիզուն ա բլբուլ:

Ղաշին ձարն քա՛ր կուկա,
Կլորվելն վա՛ր կուկա,
Միր Հայիգին դուդուգնուն
Ջեբին դայմա քա՛ր կուկա:

Փչա քումի, տուն փչա,
Խառնա պոմբակ ու քաչա,
Վեվ օր քեզի հայս դալ չի,
Էլլա շոն բես տող հաչա:

Ես լծեծի էրգու ծի,
Յոխճուկ այդը հերգեծի
Քալ լուսնյակն օր փես էլավ,
Խրուշչովին հիշեծի:

Մեղվեղենն ու Պուտինը
Իրար բաշտոն փեխ դվին,
Ադ օր դեսավ Կուդրինը,
Ջակադն էլոն չեյս աճվին:

Յոխճ դեշիմն պարկետ էր,
Վրըն քասում կարպետ էր,
Բրեժնը մաշտկածը
Բակնոտկուշի վարքետ էր:

Ես ուզեժի գարկըվուշ,
Աստին՝ օրի ատկան ուշ,
Ախճկըները հայս ըղոն,
Նահրա իլիգ բողուշ:

Ես ուզեժի ըլլուշ քուն,
Քունս խանկարեց կոճճա լուն,
Տա թշնամին հարծակվի,
Հիշեճնինկ կու Խոջալուն:

Մուտ կիշերը լուսըճավ,
Միր Ջատարը գայտեճավ,
Ճահել դղըմ օր դեսավ,
Հայս ըլլուշի հավասճավ:

Ճուրը կուկա վիրըն վար,
Հեղը առած դում ու քար,
Դոնը ինճկան մնող իմ,
Դդա, արի ինճի դար:

Գարմիր գդուց պորշուգի,
Բոյն էրգ ա սև շուկի,
Վեվ Արցախին աճկ ուներ,
Առավ կնաց ըն ֆուշկի:

Յողճ աշխարը իրար օնճավ,
Վողէիս մնճին յուբկա, ֆիստոն,
Ջինսը դավնո մողա տառճավ,
Ախճկըները շավար մդոն:

Տապակ շակա չիմ սիրիլ,
Թութուն իմող չիմ սիրիլ,
Քասում ախճիգ, լավ կիտճիր,
Ներգաճ աճվիդ չիմ սիրիլ:

Օրի առի ես գնիգ,
Լուչի առնեյ մաշինա,
Սողը արա ինչ ընինկ,
Օր մը էլլա խաշինա:

Տելեֆոնով ես կդա
Հեռու դեղըն ախճիգ մը,
Հնոր վիրա ինձի դա
Օնուշ-օնուշ բաշիգ մը:

Ինձկան կուգա վայվլա
Հերվի հոռմի ախճիգը,
Տեմբս էլլա ֆլֆլա,
Ալ չիմ ուզիլ բաշիգը:

Ես բոյ առի, մեձըձա,
Թվաց ինձի՝ մաշտ տարձա,
Սիրուն ախճիկ մը առի,
Դայդերուն մեճ խրվեձա:

Փարա չունիմ, դու՛ն չունիմ,
Մտնելուն բես՝ քու՛ն գլիմ,
Վոյդեխ հայսնիկ մը ըլլի,
Ես ալ դայմա հու՛ն գլիմ:

Լամբին լուսը լուսնի գու,
Էդճն էղիճ պուսնի գու,
Գարկըվոդը սա շոկուն
Մոյն արուրը դեսնու գու:

Գնիգ ունեյ անջիգար
Աստավ՝ քեզմն չունիմ քար,
Էրգու տնտում, մեգ խյար,
Ալ չիմ առնուլ էխտիյար:

Օնքուն մնծի հնչուկ լուս,
Յար սիրեյգու սուս ու փուս,
Չայչըրվեճա սուդ դեղը,
Ըն գնիգ էր, ոչ տա գույս:

Դոնը լուսը մարեծավ,
Աճկըս վրադ ձարեծավ,
Քոնի վրադ աշեծի,
Սիդըս քեզմով արեծավ:

Մուլա ճրով լի չայնիգ,
Հոյդ օնունն ա Նաչալնիկ,
Գասին ընու գնիգը
Դայմա կուգա սուր չալիկ:

Վրայեգ ա ու գարգուդ,
Ատտի չիկա հիչ օկուդ,
Բիջիկ ախճիգ հայս պերին,
Ձիճիգնին ին էրգու փութ:



Ջագդի կիր ա, չիս ջնջիլ,
Սարըն ձադիկ չիս փնջիլ,
Վեվ օր համան գարկըվի,
Ջիդը ծիգա գու զնջիլ:

Այդը կնծի՝ քեշուշի,
Պոնուկ հայս մը դեսնուշի,
Լավ օր թեգ մը հասկնծա,
Ըն սիրեր գու ուրիշի:

Գոդոր կեդը վար գեշտա,
Դալդա-դալդա վար գեշտա,
Տա աճկ ունիս տուն ախճկոն,
Ադ իշտահիդ փոշտկա:

Բիջիգ էյը՝ պոչեծի,
Մեձըծա նա՝ քոչեցի,
Աս ախճկնուն բոլլուդին,
Ջորով մեգ մը ջոգեծի:

Գայճ Գաբեդը հովարտա,
Էլավ փորձով համոզվեճ,-
Բուլգրները հիմիգվա
Դդա կուզին քինտը մեճ:

Հուն դըը մը գինա գու,
Ինճ ալ ասիս շինա գու,
Ծեռկը ընգաճ փարովը
Շեգ ախճկոմը դիրա գու:

Լուսը պաճվեճ ըմըն տի,
Հերիք բարգեկ քինտ-քնտի,
Էլեկ դուն-տուռ իստկեճեկ,
Ծեզի չասին տող փնտի:

Մնի ասիմ, ի՞նճ ընիմ,
Սիրաճ գնիգ մը չունիմ,
Վրասս փիս-փիս խոսողնուն
Պեյնին կապաղ մը տնիմ:

Կնձի հասա Տերնովկա,
Հնոր հայսը պեռնով կա,
Վում ալ հայսնիկ ես ծնիմ,
Կուզիմ հնոր փարով կա:

Բուղուլայր յատխին մեճ
Յոխճուկ՝ օրը բարգաճ ա,
Ֆայդա չիկա ընդի հեչ,
Թութուն խմած հողած ա:

Ախճիկ պերիր տուն անմեղ,
Առիր դարիր ըմն դեղ,
Եպ օր դունը յեղ տառճար,
Կովասն էգավ ծեզի նեղ:

Քասա ծեզի ես գասիմ,
Գարկըվուշի հավաս իմ,
Քոնի փիշմոն էգաձ չիմ,
Պերեկ ինձի Եպրակսին:

Ախճիգ պերիր ֆռալն,
Տուն շաղ գոհ էյդ Մարալն,
Հորմն գոպըն օր գերար,
Էլար փախար գռալն:

Միտկը գնեյդ զօր կիշեր,
Վրադ ախճիկ մը աշեր,
Խելըռուտինդ մոռծըներ,
Քնտադ պոներ վար քաշեր:

Մուտ կիշերը էրգըննար,
Քոնի ունիմ ես իշտահ,
Յարբս ինձի փատտվեր,
Ձոծիս օնուշ իսլվար:

Տուն մոն կուկաս ավարա,
Օննուշ կուզիս շաղ փարա,
Քոնի ադմուն թմպալ իս,
Կլխուդ մեճն ա մաղարա:

Էլար խոպան տուն կնծիր,
Հայս մը կդար հուն մնծիր,
Եպ հավասարդ տուն առնուս,
Գնեճըդ մոդ եդ տառծիր:

Ներ հայս էգար ուրիշ դուն,
Տա սիրիս կու քու մաշտուն,
Հազ ալ չնիս կեսուրիդ,
Հնճուկ մեռնի տրմ առ տուն:

Դեսա ախճիգ, առի թեգ,
Գադու պերավ ըն ջեհեգ,
Գադուն մդավ միր օրտըն,
Փատովոդ իմ ես ինճպե՞ս:

Ախ, Տերնովկա, Տերնովկա,
Քասում ախճիգ վոյդեխ գա,
Եպ օր մեմալ կեղը կոմ,
Կուզիմ էլա հեդս կա:

Տուն թևավոր թռչուն իս,
Պոլոճ-մոլոճ ջիջուն իս,
Իշուն քեռի կոռաս կու,
Պոնուշի կլեխ չունիս:

Այդին ըղավ լագդի բերք,
Աստված դվավ էրգու ծեռկ,
Ամա չիդիմ տա օրի
Մոռծավ դվուշ քեզի իսելկ՝

Բետոն խառնուշ ուզեծի,
Էլա մազեյս խուզեծի,
Քասում ախճի՞զ մը դեսա,
Մայկոպ ադակ պզեծի:

Ես ուժեղ իմ այճոն բես,
Բետոն շաղվիմ ջոռոն բես,
Փարըն առնում դունը կոմ,
Չա յօր գնիզ ունիմ ես:

Տուն սիգարետ քաշիս կու,
Քինտոյ մուխով խաշիս կու,
Ճահել, սիրուն գնեճըդ
Թուտնիդ հողով մաշիս կու:

Սարերուն սարի՛ն գլի,
Գարկվուշիս դարի՛ն գլի,
Տա սուս մնոմ գաղվի բես,
Աճկըդ ճեբիս փարի՛ն գլի:

Կոմի սարն փաղ գուդոն,
Դիրակ գըլին ըմըն դոն,
Սալանգ-սուլունգ մոն կալըն
Դեսսած չունեյդ ադմուն պոն:

Մոնի ծառը գդրեճի,
Մեմալ քոքըն փեղեճի,
Սուդյն դարին օր դվավ,
Տուֆլիս կլխուն նեղեճի:

Տուն չիս ուզիլ ընուշ կործ,
Թափառուշի ունիս փորձ,
Կլխուդ մեճը գոննայդ խելկ,
Էշտայդ օրա տուն տքրոց:

Ես քամանչա չալիմ գու,
Հըմ չալիմ գու, բարիմ գու,
Ըմըն հայսնիկ էշտուշիս
Քասում հայս մը ջարիմ գու:

Միբ Լուսիկին ձիձիկնին
Շարգն էլաձ կնձաձին,
Քամանչաձին գոյնեձավ,
Աձվին վրըն մնձաձին:

Կեսուր ունիս, օ՛յ, ճադու,
Առաճը առ տուն ադու,
Հանգիստ աքրուշ տա կուզիս,
Տեմը ջվդա սև գադու:

Ես հավեղը ջզմիմ գու,
Ախճկոն կործս դզնիմ գու,
Տա յօր ինծի չուզանա,
Պռնիմ ընու կզիմ գու:

Խրուշչովը լազդ ցոնեց,
Փիսկիլներով թել մոնեծ,
Աստրախանն Արխանգելսկ
Միլատին հոկին հոնեծ:

Մալխասն ուզեծ գարկըվուշ,
Ամա օտկը մդավ փուշ,
Տա յօր կուզիս հայս ըլլուշ,
Փուշը հոնա, Վարտանուշ:

Չովըն փչեց պաղ քոմին,
Էգավ գբավ միր ջոմին,
Վոյդեխ կդնում Մայրոմին,
Գարոդ մնծի ես հոմին:

Դոնձ ուզեծիր՝ տոմուն դվի,
Վարտը դարի մոմուն դվի,
Մեգին առի, մեգին թողի,
Ճահել գյանկըս քոմուն դվի:

Ես պուղի բես հարիմ գու,
Դրդիգ նեղիմ, բարիմ գու
Օնլի-օնլի խոսիս նա,
Կելլիմ պերոնդ գարիմ գու:

Ծմեռ էգավ՝ ծուն չիկա,
Խոր կիշեր ա, քուն չիկա,
Ես Հոպին մոն կուկոմ,
Վոյդեխ գաշիմ, հուն չիկա:

Քամանչաճի տառնող իմ,
Բարը էլլիմ խառնող իմ,
Սև Մայրոմին կասպաղնա
Շեգ Վայյային առնող իմ:

Էրգու ավճի սարն էլոն,
Աստին՝ պոննինկ մենք դողոն,
Չորտերուն մեճ մոն կալըն
Հալըն ընգոն չոնգ ըղոն:

«Սոխում- Սոչի» գարիմ գու,
Ֆլալըն հակնիմ գու,
Տա Շուշիկը հավնի հեճ,
Պոնիմ գորով բակնիմ գու:

Մոնի ձառը դաշեցիր,
Միսը էլար խաշեցիր,
Վարվիր էշտող հայսներուն
Աճվիդ չոած աշեծիր:

Ախճիգ դեսնում՝ հալիմ գու,
Տեմը լիգու չալիմ գու,
Ինճկան ալ նագդուգ ընա,
Սողը ընու գալիմ գու:

Բուդուլայն իմ ես ճարտար.
Կորձերուս մեջ միշտ արտար.
Շեգ բուլգնուն էրեսըն
Նա քուն ունիմ. նա դադար:

Էլլիմ կորձի ես էշտոմ.
Բետոն շաղվիմ էրգու տոն.
Առաձ փարաս շատ քիչ ա.
Չիդիմ փեխեյս վերին դոմ:

Ինճկան լավ ա գյանկը աս,
Ես շադ գոհ իմ իմ բախտաս,
Վերձը կուկա աշխրկին,
Խալըսիմ գու դոլգերաս:

Ես հոնկշողնի պոնեյ գու.
Միր Մանիգին դոնեյ գու.
Ընու պոնաձ չուրչխելնուն
Ըմրն անկամ կոնեյ գու:

Ես այլումին ժողվեծի,
Դարի համան ծախեծի,
Ճահել-ճուհուլ գնեճս
Օտկա-կլեխ նորեծի:

Ես պոմբակը մոնող իմ,
Էշտոմ տակսիստ պոնող իմ,
Ծեռկս ընգաճ հայսներուն
Ներ ալ ասին դոնող իմ:

Տակսիստ ըլլուշ ուզեծի,
Համան էլա պզեծի,
Ջեբին փարա օննողին
Օճխրոն բես խուզեծի:

Բուդուլայն իմ խլվլուզ,
Կուզիմ ընգուզ ու մաշմուրկ,
Իմ իշտահիս չի հասնիլ
Նա պոսպոլը, նա յալ մուզ:

Ախճիգ դեսոն հավնեծոն,
Էլոն ուզուշ կնածին,
Գայճ Գաբեդին գարկեծին,
Հիմի փիշոնն ըղածին:

Ես միշտ գեշտոմ ծուգ պոնուշ,
Դունը կուկոմ դայմա ուշ,
Իմ դիլաղը ուրիշ ա,
Շաղ մի դեսնուլ, Վարտանուշ:

Ջինջխուկի բես ձվձվա,
Օմընդակը ել լվա,
Տա Մանուշին տուն կուզիս,
Օդվին ընգի աղածա:

Դոնը վիրի բայիրին՝
Տեդին օնուշ մանդարին,
Կուզիմ մեմ ալ գարկըվուշ
Մեղկընուշաս Գուհարին:

Քինտը դայմա վիր դնգած
Չէր պաժանվիլ ուր ֆեսն,
Շեզ գնդածը էրեսըն
Դընըն կնած միր փեսն:

Արի էշտոնկ մենք հայսնիկ,
Իրար էդվոնց պգոտկիսկ,
Հայսը եպ օր նագ ընա,
Փատտվիսկ ու հագ ընիսկ:

Քու իշտահդ շադ մեծ ա,
Հերիկ հեդս օնլընաս,
Կուզիս հիմի մաշտս կա
Ժումմը պոնա յու ձեձա:

Տարելկընին հարզեծի,
Շիմին առաճ շարեծի,
Հայսը եպ օր ուշծավ,
Ինկըս տըվվի գողրեծի:

Կեսուրեճըն ինճ ֆայդա,
Գարի-գեպի ուր նեսըն,
Հայսը էլավ ետ կնաց
Կեսուրեճը էրեսըն:

Կեղը գեշտաս ակվընա,
Յոխճուկ օրը ետ չիս կալ,
Ճահել մաշտոդ բեդ գնա,
Չիդա դղըն վումըն ա:

Մուտը ընգավ՝ բարգեճակ,
Յողրոնն առիբ յոն կնճիր,
Հեովն իրար բակնեճակ,
Գոնե մեմը նաս տառճիր:

Բուդուլայը տակսիստ ա,
Վրըն աշիս՝ շադ խիստ ա,
Ուզաճ փարըն եպ օր դոն,
Օտկա-կլեխ արտիստ ա:

Բուդուլային գաշիս տա,
Կոյա պոնուշ էլաճ ա,
Ուր աստաձը չըլլի նա,
Մեմալ աշիս՝ սադիստ ա:

Բուդուլայը գարկըվի գու,
Վեվ օր լսա, համան կա,
Միսմվիլ միկ, դվեկ փարա,
Պոնի, դուգը եդ գուդա:

Բուդուլայը թմպալ ա,
Իշուն քեռի կոռա գու,
Էշն ալ ուր բես ալարգեդ
Էդվոնցն ի վիր գոա գու:

Կումշի իշտահ տուն ունիս,
Փարա չունիս, ադ հիչ ա,
Կաֆե կեշտասս գուշտ գուդիս,
- Ընգեյս գուդա,- միշտ գասիս:

Մըյդով կործ մը կդավ հեջ
Բուդուլայը միր լոտի,
Նորըն փարա փեխ առավ,
Ալ չի մնալ օնոտի:

Գայճ Գաբեդին աշեծեկ,
Արժի փադը դաշեծեկ,
Ըն թեխամախդուշ լավ կիդա,
Սրաբարը քաշեծեկ:

Այդին թութուն քեշիս կու,
Միր Մարգոյին հիշիս կու,
Ընու մաշտուն արաբըն
Կիշեր ու զօր քշիս կու:

Գայճ Գաբեդը մոն կալըն
Հաստ Մայրոմին ջոնգն ընգավ,
Ընկան կզեց, կզգոտեց,
Հալումաշ ու չոնգ ըդավ:

Մեթը գեշտա կեղերը,
Ումուդ գուդա հայսներուն,
Խլվլոն գու հայսները,
Ձուռ-ձուռ գաշին մաշտերուն:

Տուն թիլինտի դղա իս,
Կեղին նեսը պուդա իս,
Թեզ մը ել ու գարկըվա,
Հնոր ուժըդ խնայիս:

Մեզ գնիգը քիչ եգավ,
Աճկո մդավ Մարինըն,
Սիդրս քեզմն գողրեծավ,
Օնծի-կնա իմ դընըն:

Վեվ Մանիգին լավ չիդա,
Օնգոճ ընա ես ասիմ,
Հիչ չի գինալ ավարա,
Պեյնին քուրֆն ալ փարա ա:

Կարուն կուկա, վախիմ գու,
Գասին չին կալ հոնկշողնիս,
Ես պամպերսնիս ծախիմ գու,
Տա յօր փտին չուրչխելնիս:

Ես դուդուգըս չալիմ գու,
Հայսին ջահրին պահլիմ գու,
Փեսա, չաբուխ յոն կնա,
Հեովոնց գոյնած հալիմ գու:

Մանիգ, արի տուն ասա,
Շադ մաշտ կուկա քու քովը,
Ես պերաշկիդ լավ գերա,
Ամա վուրա կարտոֆը:

Այրն, բեյրն խաբար չա,
Փարըն կույնով ջոնճա գու,
Պերաշկիյով, չուրչխելով
Փարըն բանկին կուչկա գու:

Ավաղիսարու յայլային
Ջոնչվեր տառձավ ալլային,
Համան ըղավ օկտագար,
Գաթ ձախելըն արավ քար:

Հոնկշում չիկար հիչ ինծի,
Պերաշկիս էր միշտ հոմլի,
Վեվ օր ուզեց յոնս ձախուշ,
Օնիձեծի, թոուծի:

Շաղ հազ գնին Մանիգին
Բիջիգ ու մեծ խսումնին,
Կիդին, ընու չոնտին մեճ
Հազարնեց ին փարընին:

Աս Մանիգը ջարբիկ ա,
Ըմըն մեզին հարկա գու,
Էրգու մուգ օր ծեռկն ըյնի,
Պոնա համան գարկա գու:

Ասմուն օնուշ չուրջխելնի
Ուվէկ չունի աշխրկին,
Լավ օր էգակ, հոնկշողնի,
Գարողած իմ ծիր փարին:

Հուգա էգէկ, հոնկշողնիս,
Չարուխ առէկ չուրջխելնիս,
Ալ չիմ գարի տըմ առնուլ
Լիկը լցվոն պամպերսնիս:

Հայդի էշտոնկ Մանիգին,
Մեծ դոբրակ մը հետդ առ,
Քրֆով լիկը լու գու,
Երկմ ալ գասա անպատճառ:

Մանիգին հետ կործ պոնա,
Ջվալդ ամա ձագ ըլլի,
Ասմուն գնա, ըմուն գասա,
Լացընա գու մայդ քասա:

Գես կիշերին օնծա կործի,
Պերաշկիյիս հոմը պոնեց,
Վեվ օր կիդեր դավնո ինձի,
Փարըն ծեռկին մոդս պգեծ:

Ինծի գասին՝ գարկըվիմ,
Գերնծընին Սառային,
Ընու առնում ինձ ընիմ,
Բաջիսիմ-գոսնիմ վրայրն:

Գարկըվոդ էր Շալիկոն,
Սավետ դվին շեգ ախճկոն,
Մորը խոսկը չլսեծ,
Սողը ըղավ շադ փիշմոն:

Ղումուշխուրն հայս պերին,
Սերգել Պոլը ծաղգեծավ,
Էգավ-օնծավ մեգ դարին,
Օնուշ մոնճ մը ձնվեծավ:

Գարկըվուշի դղա իմ,
Գերևծրնին ալլային,
Ախճկրներուն բոլլուղին
Ինձի պերին Ալային:

Հեռու կեղ ա Տերնովկրն,
Ամա բոլ ա ախճկրնով,
Ալլայ մդաժ տելեֆոն
Բուղուլային մոն կուկոն:

Գայճ Գաբեդը դակարուն
Հայս մը ձովըն դուն պերավ,
Հայսը ընկան դղղլաժ,
Խաշխլեժավ քուն ըղավ:

Հայս մը «չիմ-չիմ» շաղ արավ,
Էգաժ իշչին եղ արավ,
Սիրաժ դղըն կալուն բես
Թևը մղավ դուն դարավ:

Գայճ Գաբեղին գարկեծին,
Շաշուրմեց ու քղնեծավ,
Յողճ կիշերը զավալին
Դուվրին տարծավ բարգեծավ:

Գայճ Գաբեղին աշեծեկ,
Օղվիդ պայսը նեղեծեկ,
Օրպըվարի հայսներուն
Միդը մղեկ, շոյեծեկ:

Տուն այլումին ծախիս կու,
Պեյնադ սիգար գախիս կու,
Ըմրն մուխը թողուշիդ
Քինտդ գարի վախիս կու:

Հայս մը պերին խլվուգ,
Տրին ծեծը Բուդուլին,
Գըդըգ արավ, խադվըծուց,
Հոկին հոնեծ մուդուլին:

Հարը գարկե՛ծ Դիլիմին,
Բիջիգ էր ու աճումի,
Աճխկոնն ընկան չայճըրե՛ծ,
Ծառը հոնե՛ծ ուր չումի:

Գնիգ ունիս տուն, գասին,
Միշտ լավ գաշիս միր հայսին,
Եպ ուրիշի սիրե՛ծիր,
Քրֆըյդե՛ծին քու ջնսին:

Գասին՝ քիչ էր թթվածին,
Ծովափն էգա՛ծ նստա՛ծ ին,
Աս հայիկը գավալի
Հայաստանն փախա՛ծ ին:

Աստին՝ կուզինկ մենք անգախ
Աբրուշ ագատ և անվախ,
Եպ օր անկորձ մնա՛ծին,
Արին վիրա ախուվախ:

Քոնի՛ հայի ես կիդիմ,
Մեծ-մեծ դայմա խոսին գու,
Հայաստանը սիրելըն
Իրար բակսի փախչին գու:

Արարատը իմ տիմաց
Սըլդին մեճըն գլլի լաց,
Միտկը գնա զօր կիշեր՝
Ինճկան մնա հուն գերված:

Գաշիմ թուրկին խողերուն,
Հայերեն ին, հոմով ին,
Միդրս հեովոնճ ալ գարի,
Օ՞րի թուրկի խողեր ին:

Շադ հարուստ չեր միր գայկը,
Վադ ալ չայկը մենք ուդիլ,
Տա մեկ հեդ օր աբրայկը,
Իսա օրը չայկ ըյնիլ:

Գայճ Գաբեղը կեղածի
Մնած ըռոնց տրգծի,
Վե՛վ օր ջոմայրն լավ կիդեր,
Կնաց տարծավ քաղկրծի:

Գասին՝ գեշտաս ծուգ պոնուշ
Դոնը թողած քու շուկը,
Մաշտ մը խավվուտ սիրելլն
Դդա շինեճ Տշուգը:

Այ Վարվառա, Վարվառա,
Մաշտուդ ջեբը տիր փարա,,
Մաշտդ գեշտա Մաշային,
Մաշին մաշտն ա ֆուխարա:

Բալկոնն էլած սե՛յր գնա,
Ներ սեյր գնա՝ վե՛վ կիդա,
Դարին էլած կնճած ա,
Գոյնած ալի սե՛յր գնա:

Մեկնոն բաբը մո՛ւ ունի,
Ամա միտկը ուրիշ ա,
Մոմուն մոռճած աս կիշեր,
Ճահել հայսի հո՛ւ ունի:

Բարաբեծավ Ախուծըն,
Չոյծավ կոճճա յայկընին,
Աս Մանիգին օնեծկըն,
Գնիգ տառճոն ախճկընին:

Քամանչաճուն էրեսըն
Աս հայսնիկը էրգնճավ,
Հայսը հիմի օդին ա,
Էյմիշ գըլլի միր փեսըն:

Բեմին վրըն շարվին գու
Ախճկըները ջինս-ջնսի,
Կուզին համան դուր էգուշ,
Չալլաղ կինա բարին գու: 0

Ասօր հավն մռալդեծ,
Օմբրեդ կոռաց, գագդրտեծ,
Տուն ուզածըս դվիր հեչ,
Սըյդիս վրըն ադ ագդեց:

Մածուն քսա էրեսըդ,
Հնոր քիչ մը ճերմըգիս,
Հանգիստ թողուս հայսներուն,
Խելկըդ դայիմ գարգըդիս:

Ձովուն ճուրը ադի ա,
Դերին դունը դըյին ա,
Դերըն էլավ շաշուրմեց,
Իրիցկինը ըդի ա:

Միր համշենծիկ բարելըն
Մնի գասին իրար տեմ,
Սովորուտինն ադ պարի
Մեզի կուկա դարերըն:

Մնի ալի գաստըվի,
Ամա կնձեկ հոնկշեձեկ,
Վեր ճահելն օր գարկըվի,
Ալի համան հուն կնձեկ:

Էկիգ դրդա ձնվեձոն,
Մեգը՝ մեգըն քասում ա,
Հարը աշեձ ն աստավ.
Չըլլի՞ մեգը ինձմըն ա:

Դվեկ ինձի գնջիլը,
Գաբիմ Մարտին պերոնը,
Ինչ գաղտնիկ օր ես ունիմ,
Համան գասա կեղոնը:

Ֆռած-էգավ չխչիգ մը,
Ձառ մը դեսավ ըն չոմի,
Ձառն էլած էր ախճիգ մը
Մաշտուն ձեռկըն աճոմի:

Ծեռկըս առի իրակը,
Ուստա տարձա իտօղլի,
Նոր Լույս կեղին դիրագը
Արտըվագդն ա Ավճօղլի:

Նոր Լույս կեղին ըմրն մաշտ
Գաբրի խաղաղ, գաբրի հաշտ,
Կդեկ կեղ մը տունկ ուրիշ,
Հնոր օննա ադմուն փաստ:

Տա հայծընիս Յոկուշին,
Ընդի իսելոկ մաշտ չիկա,
Ըմրն սեղոն նստուշին
Գուդա փութ մը աջիգա:

Լավ աշեծեկ Հայգազին,
Ջերմըգաձ ին մագերը,
Ակընս դեսա ես բագրին,
Էդվոնձն ընգոն դագերը:

Ջուգբա կնաց Հայիգը,
Աստավ՝ մեմալ հոնկշիմ ես,
Համան հոնեծ վայդիկը,
Չպլաղ նեդվեծ ճրին նես:

Գարգուդ արավ ակվրնա,
Թվաց հավին շակրն ա,
Իրար էգոն ամբերը,
Գասին՝ սարին թակրն ա:

Գնիգ մը գա, կիշեր- գօր
Կյաուգա կրա գու,
Մեղոն նստած մաշտկածը
Փաստըն խառնա, ջրա գու:

Ուլիծընուն մո՛ն կուկաս,
Թախտին բարգիս յո՛ն կուկաս,
Գարկըվուշը մոռճաճ իս,
Ի՞նչ մտկի իս տուն, Ղուգաս:

Գայճ Գաբեղը քեյֆ ըղած,
Կեղը տարծավ համանի,
Զայտար հայսը ետ կնաց
Բոյը էրգըն Շահանի:

Բուղուլայը միշտ կուգա
Թախտին վրըն թալվոտկուշ,
Ընու հեռսը շաղ կելլա,
Եպ օր ըլլի վիր էլլուշ::

Դուլգը ջղաս գախված ա,
Զավալիգ իմ, ի նճ ընիմ,
Փարըն դայմա բիդու ա,
Ալի դվեկ, գաղաճիմ :

Աստին, ընտին ես կընծի,
Դուլգով առի բուլ փարա,
Հիմի չունիմ, վու ստի դում,
Դվողը տող միտկ ընա:

Թմպալժած ա կեղացին ,
Գով ալ չունի օր գորչա,
Խեղը մաշտբոյ աձուկին,
Բագար գեշտա պոնճարա:

Թուրկին այդին խեղ չիկա,
Կարտոֆ, մարկոֆ պուսնի գու,
Դայդ մի ընիլ Անիճկա,
Քեզի ալլայ դըրգա գու:

Դայմա գեշտաս տուն կործի,
Բազի գընիս խնոծի,
Տա նշոնլի ունիս նա,
կնա հոմը առ ձոծի:

Ախ, էս մեռնիմ քու հոկուդ,
Ինձմըն օննաս միշտ օկուդ,
Ինն օմիսն օր օսնի նա,
Դդա պերիս էրգու ջուխս:

Չայչրըվուշըդ բոշին ա,
Կորձին գեսը խոշին ա,
Իդա քասուկ օդվընուդ
Մոդն հիմի քոշին ա:

Ձովուն ճրին դալդընին
Ապին գուտտոն խաղ գնին,
Կերմակ-խոշեր ծըգները
Արևին դագ գախ գնին:

Երանի դոնկ պոնողին,
Պուշտը պարագ մոնողին,
Պեռին դագը խյճկըլաձ
Էշը ջոռն հոնողին:

Գատին սերը քաշեձի,
Օմնին դագը աշեձի,
Գով գտելըն ըմըն օր
Էրգն մադվիս մաշեձի:

Բառագն ի վիր էշտալըս
Ուսաս ընգավ ճվալըս,
Ինչ օրի իմ ես, Մայրոմ,
Չիս հայծընիլ տուն հալըս:

Ըն ախճիգը վուրա յա,
Օտկա-կլէի փարա յա,
Ամա վրաս չի աշիլ,
Սըյդիս նէսը յարա յա:

Եպ օր աստեղ տուն էգար,
Աստի՝ գլլիս ինծի յար,
Ամա սողը հասկընձա.
Տուն ճահել իս, ես՝ էխտյար:

Փափուկ ծունի գարող իմ,
Գնիգ չունիմ, յարող իմ,
Ըմուն հայս մը ես կուզիմ,
Հնոր համան փարողիմ:

Ախճիգ դվին եղ գեծոն,
Փեսին դեսոն յոն օնծոն,
Թմպալ փեսին էրեսըն
Ալլայ էլոն ջոնգվեծոն:

Սարին դըյի փեշերուն
Հերիկ մոն կաս վախվորած,
Զոածնողը էշերուն
Դաշաղնին ին գախ ընգաձ:

Գասիմ քեզի ես քասա,
Մի բամբասիլ տուն բասա,
Մեմը աշա քու վրադ,
Ընճաղ տեմըս ել խոսա:

Աս ներ դարին պարի ա,
Գարկըվուշի դարի ա,
Իմ առնելիկ ախճիգը
Հայս ըլլուշի վարի ա:

Առաճ կոռոնկ՝ եղ գեշտոնկ,
Միր աստաձնուն հաշիվ դոնկ,
Տա համանի գոնգ չառնունկ,
Վերճը փիշմոն բիդի կոնկ:

Դիլիմ, հերիկ ա՛խ քաշիս,
Ազաբ օրեյդ տուն հիշիս,
Հայսը յատիսին բեդ գնա,
Օրի աստղերուն գաշիս:

Կուշկուրիգը էգաձ էր,
Շալա շաբիկ հակաձ էր,
Սև Դիլիմին գնիգը
Յատիսն էլաձ փախաձ էր:

Միտկըդ ընգավ գարկըվուշ,
Եպ թներուդ չիկա ուժ,
Հայսը քեզմըն խըյդա նա,
Ես բադրաստ իմ ժմըննուշ:

Ջերիդ չունիս տուն մնդիլ,
Առաձ ունիս հայսի թիլ,
Տա գարկըվուշ տուն չիդիս,
Ինձի ումուդ մի ընիլ:

Այդին լազդը մկլած ա,
Ժերերեծը խյդնած ա,
Գայճ Գաբեդը ներ փեսա
Հայսին ձոծին քյդնած ա:

Ճերմագ թուզը հասած ա,
Օտկիս տուֆլին մաշած ա,
Վարտանուշին արիզը
Ճահել գինա խաշած ա:

Կուզիմ ասուշ ես պածրն,
Աս խոսկեր չին հավածրն,
Ըմրն հավնած ախճկրնուս
Համան կուկոմ հախածրն:

Արաբաջի դղա իմ,
Կորձիս մեճը աղա իմ,
Ընկան ախճիգ սիրիմ գու,
Մեճվին ձուվու դալղա իմ:

Շակա-մակա ես չիդիմ,
Շադ սերյոզնի դղա իմ,
Վեվ թարս աշա Մայրումին,
Շապըլտիմ գու էրեսնին:

Բեդրոս Մեճին քաղակին
Կակեբեի դղակ ին,
Կուճկով լծվոն Մասկըվա,
Ալ վե՞վ մնաց Պիտերին:

Բեխավորը պալաչ էր,
Ադ գաղղնիկ չէր Դիլիմըն,
Մեղավոր չէր, գաղաչեր,
Ամա դրգեց Կալիմըն:

Ստալինը բեխավոր
Կարր գովն եղ կուզեր,
Խեղճ կեղածին մեղավոր
Օ՞րի շուներ Մաուզեր:

Գարիս-գեպիս տուն նեսըն,
Կլխուն տրաձ ձուռ ֆեսըն,
Շիրին հայսդ ետ կնած
Դրգըլ դղիդ էրեսըն:

Ընտունեծիր սիղըտ պաց՝
Քու հոնկշողնուդ, միր Մնաց,
Եվ էշտալըն օր-օրի
Փառքդ հեռու ֆոֆոած:

Գասիս՝ կոյա գորիջ իս,
Ամա ախճկոնս արժան չիս,
Էգաձ ջոմպովդ ետ կնա,
Քոնի գոպա գերած չիս:

Մոմուն այդը տուն մդար,
Կլխուդ բելըմը կդար,
Դոնը մնծաձ ախճկոնը
Ծեռկն բոնա հիմի դար:

Իրար տիմաց էրգու սար,
Բոյերը մեզ հավասար,
Կիշեր ու գօր վիջին գու՝
Վեյ Ինդլուկը առնու վար:

Գնձա գինոդ Մատիկը
Շոկուն հոնեձ շաբիկը,
Մեմալ յոնը աշեձ նա,
Համան դարավ պատիգը:

Օջախ ունիս, դուն ունիս,
Օրի աբա քուն չունիս,
Բատջառն ադու ես կիդիմ՝
Սըյոդվ սիրած մը չունիս:

Աս աշխրկին կիտայծիկ
Կուզին դայմա լավ պոնուշ,
Տա յօր գղլով հաց ուղին,
Մեզի գլլի օնոտուշ:

Միր հայիկը խաչաբաշտ,
Խաչ շինին գու չապն շադ,
Կոյա աստվաձ բիդի կա,
Ըմրն մեզին դա փշադ:

Աստձուն ընկան բաշտեծին,
Աստվաձ ինկն ալ զարմրձավ,
Խելկը, միտկը քեշտեծին,
Օտրն ինձավ մաշտ տարձավ:

Ինձ օսկի գա՝ խաչին ին,
Ընեձ դերն ին դերընին,
Ադ օսկիկը ձախեյնը,
Շինեյն ալլայ ջոմպրնին:

Եպ հանդիբինկ, տուն աշա
Իմ աճվընուն նեսնրնտուս,
Բատկեյդ սիդս գարա,
Ուվեկ չիկա քեզմըն տուս:

Խելկը ընու վարվիր էր,
Արևին ալ չէր հավնիլ,
Առ ընուշն լուսնյագը
Արևըն ալ գարմիր էր:

Մեմը պոլեյդ տուն աշա,
Ըմըն ջնսի աբրանք ա,
Ամա փարադ չի հերկիլ,
Ինճ ալ ուզիս շադ թանգ ա:

Ուրիշ երկրի հակուստով
Ձկձկաձին խանուտնին,
Դեսոն առնող չիկա նա,
Չախու հոնին գես կնով:

Աբրահամ լցիր խանութը,
Կինը հավըն հոնեծիր,
Ներ դարին օր մոդգրծավ,
Գես կնով ալ ձախեծիր:

Իլաճ գուդոն ապտեկին
Վերմը մաշտու բեղա,
Փարով առնուս օկուդ ա,
Իսկ բեղերն՝ ֆայդա չա:

Ինճկան պենայա մեզի դոն,
Հնոր աբրինկ մաշտու բես,
Դարուն մեմը խոսկ գուդոն,
Ադով գաբրինկ, իսկաբես:

Լուսը-լուսին, ծեռկըդ ուսին
Տուն հազ արիր Մարուսին,
Եպ օր մուտը ընգավ նա,
Համան կնած ուրիշին:

Ես ինձ ընիմ Սև ձուվը,
Հիչ չի թողուլ ուր քովը,
Դալդալի ա կլխըն վիր,
Թաբյատուրգ ա Սև ձուվը:

Օնդեր մնցած դներուն
Վայվըլին գու շակալին,
Ես ինչ ասիմ դերերուն,
Թոզ գուլ գուդոն քաղակրնուն:

Ասմուն տրգից գըլլին տա,
Նախանձվին գու տրգըծին,
Օրի, գասին, Աբամըն
Դոլար գուդա Արցախին:

Զարմընում գու ես դայմա
Խելկա բագաս ախճկրնուն,
Ինճկան պոնուրգ դըղա գա,
Կելլին գառնուն թմպալնուն:

Կեղը կուզեյդ տուն օսնուշ,
Ամա օդվիդ թըյճին հեչ,
Շալգեց դարավ Գաբեղը,
Ընճաղ ցիկեծ ճրին մեչ:

Գյանկը ինկա՛ն թեզ գոսնի,
Ճրի բես՝ կուկա գոսնի,
Ընկան կիսատ կործ թողած,
Օրի ադմուն թե՛ զ գոսնի:

Տբրոց էշտաս՝ իսե՛ լկ գոննաս,
Այճ մը զայնիս՝ փո՛ ստ գոննաս,
Տա յօր փարա վիրը դաս,
Տուն գալուրի պո՛ ստ գոննաս:

Ախճիզ էյդ տուն ջան-ջիգար,
Համան քեզի հավնեճա,
Հնճուկ կընճի հոյդ ասուշ,
Ուրիշ մեզին տուն կըդար:

Վու՞մ բիդու ին վիբորնին,
Չախար գրնին սուդ դեդը,
Թանգրնոն գու օր-օրին
Տա հավգիտը, տա՛ եդը:

Եպ օր վիբոր նահրվի,
Կուկոն բոլ-բոլ խոսկ գուդոն,
Հենց դեպուտատ տառնոն նա,
Համան կելլին յոն գուդոն:

Աստին, ընտին դուզ առնուշ,
Հայսնիկ կուգեկ տունկ ընուշ,
Ջոնգրվուշը միկ մոռնալ,
Եպ օր ըլլի եդ դվուշ:

Կուգեկ ալի մնի ասիմ,
Ամա խղջոնկ հայս ու փեսին,
Փեսըն ըհըն օդըն կնաց,
Հայսին կուգա դեսնուշ ձոծին:

Ինս ւիրի Յոկուշին,
Դեսէկ ինու քոկուշին,
Ընկան ուռած քոկաձ ա,
Քինտը բերոնն ընգաձ ա:
(Ժողովրդական)

ԴՈՒԵՏ

Քամանչըն զիլ չալեր գու,
Սրաբարը թնդար գու,
Էրգու հայսներ տեմ-տիմաց
Մնի աստին մեկ-մեգու:

Սիալվեծար տուն գյանկիդ,
Մաշտ մը առիր շադ գոբիդ,
Ինճկան բիդի տըմ առնուս,
Թեզ մը փրգա տուն հոկիդ:

Քու խելկովըդ պոն գասիս,
Ամա յոնեյդ միշտ գաշիս,
Ես օր թողում իմ մաշտուս,
Պզիս համան տուն գառնուս:

Կոյա խելկով ախճիգ էյդ,
Լավ չաշեծիր տուն պուէյդ
Հայդ ա ալլայ բատջառը
Օնդեր մաշտ մը առնուշիդ:

Տուն քու մասին մի մոռնալ,
Կիդիմ, մաշտվադ չունիս քար,
Տա Մանիգին ասէյդ նա,
Փափառագը հոյդ գուդար:

Հոյդ թաբյատը տուն կիդէյդ,
Օրի, ասա, սուս գեծար,
Տա Մանիգը իմընար,
Վեր ձագ մդնու չէր կիդնալ:

Վոյդէիս կդնէյ Մանիգին,
Դոնը դեղին չէր գինալ,
Դաժե մաշտը գավալի
Ներ էշտուշը չէր կիդնալ:

Բոխճըն լիկը մանդարին
Վիրա գեշտար Ռուսաստան,
Ալլայ կիդեյն Մանիգին,
Բիզնեսմեն էր իսկական:

Միավլիկ կու, տունկ, հայսներ,
Գարկըվուշի միտկ չունինկ,
Ներ ալ աշխա՝ ախճկըներ,
Ընեճ հեդր մոն կուկոնք:

Դդաք, մեճ-մեճ խոսիկ կու,
Միշտ իսլաստոյ չիկ մնալ,
Տա Մանիգը իմընա,
Պոնա գորով գարկա գու:

Գես կիշեր էր, հայսնիկին
Երկը, բարը թնդար գու,
Իսկ օնգոճը Մանիգին
Ռուսաստանին զնգար գու:

Ախճիգ կուզիս տուն առնուշ,
Հեղը խաղուշ, խլվըլուշ,
Տուն էխտյար իս քոնի յօր,
Օրեյդ ադմուն օնծընուշ:

Կուզա ըմբն ջոնչվեյնին
Ուրին ասին մալադեց,
Տա ինչպես Շուշոն թոռին
Հարուր հազար նվիրեց:

Տա մեզին օր հազ արավ,
Մատը երգինկ հոնա գու,
Վեվ օր չիվնին բարա հեչ,
Օնեձկին մեջ կոլա գու:

Օնիձեծիր տուն մեզին,
Միգալին հեդ գովեծար,
Դարիդ էգավ ու կնած,
Ինչ քար ատտի օննծար:

Ջերդ՝ բարաբ կլխուդ բես,
Հայսնիկ կուզիս ընուշ թեզ,
Տող աշխարը զարմընա,
Չա յօր տարծար էրգու գես:

Հարուր հազար ուզեծիր
Պաշխիշ դվուշ տուն մեզին,
Թեն փարադ գորուսիր,
Ջիմարդուտինդ իմածին:

Դունը լիկն էր մգներով,
Տուն ալ փարի կուչկայով,
Գուդին դեյի վախեծիր,
Համան Մասկվա դրգեծիր:

Տուն չէդ աբրիլ աշխրին
Ադկան խիտրի տա չլլեյդ,
Մոլորեծնիս ըմընին,
Գնիս ալլայ քու կորձեյդ

ՔԱՌՅԱԿՆԵՐ

Տխուր օրեր անքանակ
Մեր այս կյանքում շատ տեսանք,
Բայց դիմացանք, քանի որ
Հույսեր կային լույս-պսակ:

Նորից եկավ ամանորը,
Բարով լինի ամեն օրը,
Առողջ լինենք և երջանիկ,
Այս է կյանքում կարևորը:

Ես մարդ էի փեշակով,
Հագնում էի ճաշակով,
Հիմա եկա ծերացա,
Էլ ո՞նց ապրեմ թոշակով:

Ես քեզ սրտով սիրեցի,
Սիրո երգեր գրեցի,
- Բայց դու ծեր ես, - ասացիր, -
Սիրուդ դարդով այրեցիր:

Երբ առավոտ վեր կացա,
Ձեր դռնովը ես անցա,
Ինձ հալումաշ նայեցիր,
Նո՛ր սիրեցիր, հասկացա:

Խոր գիշեր է, երկնքում
Ասուպներ են պլպլում,
Գլխիս վերև դու կանգնել,
Ի՞նչ ես անվերջ բլբլում:

Սարից կգա ժիր առուն,
Կարկաչելով՝ ջա՛ն գարուն,
Ձորափեշը դու իջել,
Թռչկոտում ես ու պարում:

Ի՞նչ ես անվերջ մրմնջում
Բախտիդ վրա տրտնջում,
Միավել եմ, ես գիտեմ,
Զուր ես միտքս խճճում:

Լուսինն այսօր նորել է,
Կինը տնից կորել է,
Մարդու տված մատանին,
Մատից հանել բերել է:

Այ դու Վարդուշ, կարմրաթուշ,
Միրեցիր ինձ, ափսոս, ուշ,
Ես Փուփուշին տիրացա,
Սև աչքերիդ դարձա փուշ:

Հերիք անես դու կատակ,
Քո կատակն է միշտ տափակ,
Մեկ էլ բացես բերանդ,
Կուտես ինձնից դու ապտակ:

Արև՛, արև՛ շողշողա,
Ամպերի մեջ մի՛ լողա,
Յարս ինձնից խռովեց,
Միրոս դարդից կողողա:

Էլ չլսեմ ես տրտունջ,
Տե՛ս, բերել եմ ծաղկեփունջ,
Թող շողշողա հարկիս տակ
Քո ժպիտը ամեն քունջ:

Տունը լիքն է բույսերով,
Ցերեկային լույսերով,
Նրանցով ես հիանում,
Էլ ե՞րբ ապրես իմ սիրով:

Ամառ եկավ, բայր՝ բոլ,
Ծովի ջուրը՝ սառն ու գոլ,
Հարսանիքը սկսենք,
Զարկեք գուննա ու դիոլ:

Մարը՝ սարին է նայում,
Լանջին գառնուկ է մայում,
Մի սևահեր գառնարած
Շեկ աղջիկ է փայփայում:

Հեռվից կգամ, հետ չեմ դառնա,
Թեկուզ փշոտ սահման էլ կա,
Հայաստանս չեմ մոռանա,
Իմ հայերեն լեզուն վկա:

Ջարմանում եմ հայերին,
Հեռվից կարոտն ու՞մ է պետք,
Հայրենիքը լքեցին,
Չթողեցին ոչ մի հետք:

Օրեր անցան, դու՛ չկաս,
Խոսք ես տալիս, թե կգաս,
Միրտս այնքա՛ն վառեցիր,
Միրտ չմնաց, էլ չգաս:

Ասում ես, թե կին ունես,
Էլ մի դուրս գա քո հունից,
Նման կինը բաշխեմ քեզ,
Որ ինձ դառնաս բախտակից:

Գիշերն անցավ, քուն չկա,
Քանզի կողքիս կ'ի՛ն չկա,
Զմեռ լինի՝ ձյուն ուզեմ,
Խեղճիս համար ձյուն չկա:

Ինձ հովերը թն տվին,
Դեպի երկինք սլացա,
Վերադարձա վերստին,
Կյա՛նք, որտե՞ղ ես, չիմացա:

Խրուշչովը ճառաբան
Մեզ խոստացավ հազար բան,
Դարակները խանութում
Դարձրեց հացի քարտարան:

Բրեժնևը միշտ բարի
Ծամոն ուներ բերանում,
Եվ որսորդ էր նա արի
Ընկերներով մեծանուն:

Արժանացավ փառք ու պատվի
Բրեժներ մեզանում,
Ուստի կուրծքն էր ամեն տարի
Մեղալներով զարդարում:

Գորբաչովը զիլ ճառեց,
Որպես քամի, վառ փարոս,
Ուստի արին գահրնկեց,
Երբ որ գնաց նա Ֆարոս:

Գորբաչովն էր օղից խոսում
Եվ ասածը վերվար մանում,
Չէր հասկացվում ի՞նչ է ասում,
Լսողին էր զահլա տանում:

Գորբաչովը բարբառեց
Հինը նորով փոխփոխել,
Իսկ դուրս ելավ, ինչ որ կար,
Պետք էր անդարձ կոխկրտել:

Մարդ էր տկար, ձի՛ նստեց,
Դարձավ երկրի ղեկավար,
Չին էլ ելավ քացի՛ տվեց,
Խեղճը ընկավ դողահար:

Մի հիվանդի տկար, անգոր,
Պաշտոն տվին փառավոր,
Շրջապատը նրա հգոր,
Պտտվում էր շուրջբոլոր:

Տասը ոչխար, երկու կով,
Հոգուդ մեռնեմ, Մալենկով,
Գահին երկար մնայիր,
Մեզ հարուստ կյանք կտայիր:

Անդրոպովը ղեկավար
Չխնայեց ծուլերին,
Թե որ ապրեր նա երկար,
Գործ կճարեր ամենքին:

Հավաքվել էր ծերակույտ
Քաղբյուրոյում մեր երկրի,
Մահը դաժան և անփույթ
Խլեց-տարավ հերթ-հերթի:

Խցանումը Սոճայի
Հազիվ մի օր վերանա,
Շքախումբը Պուտինի,
Քանի հաճախ կերևա:

Բեխավորին անարժան
Գովքը երկինք հանեցին,
Ով որ փառքի էր արժան,
Նրան պատժեց շատ դաժան:

Ես ինչ ասեմ դարերին,
Այս անլեզու քարերին,
Գլորվել են ձորնիվար,
Վերում թողել քարերին:

Ես գնացի Արտաշատ,
Կերա խնձոր ու փշատ,
Հայի ձեռքով խնամած
Այգիներն են մրգաշատ:

Արագածի կատարին
Բազեներ են սավառնում,
Ինձ թվում է՝ վերստին
Մեր հայերն են տուն դառնում:

Ախ, Հայաստա՛ն, Հայաստա՛ն,
Դու իմ հոգու բուրաստան,
Վիզադ հանիր, դե՛ն գցիր,
Որ չմնաս հեռաստան:

Ղարաբաղի սարերում
նժույզներն են թողել հետք,
Ու կհասնեն թշնամուն
Ամեն վայրկյան, որպես նետ:

Դեղնած սարերն ամպեցին,
Սևուկ ձիուն թամբեցին,
Ծեբելդագի իմ յարին
Չուզած դղին ճամփեցին:

Ձեր տան դռները միշտ գոց,
Սիրտս՝ բոց, կրակ ու խոց,
Ախ, թող բացվեն դռները,
Մտնենք սիրով իրար ծոց:

Յար, ասում ես դիմանամ,
Ի՞նչ անում ես՝ չիմանամ,
Դու ուրիշին կսիրես,
Ջահել եմ, ո՞նց դիմանամ:

Հեռվից-հեռու քեզ սիրեմ,
Սիրո երգս նվիրեմ,
Մի պահ ժպտա վարակիչ,
Ինքնամոռաց նվիրվեմ:

Ասաց՝ պե՛տք է, պե՛տք է, պե՛տք է,
Բացթողումը հնի հետք է,
Անցան տարիք, մնաց նույնը,
Նորն էլ կրկնեց՝ պետք է, պետք
է...

Եկան կոնակ-կոնակի
Մեր այրերը միշտ արի,
Որ երրորդը իր օրում,
Երբեք մեջտեղ չմտնի:

Ծառայողն էր մտորում,
Զուր չէ ունի մեծ գրպան,
Եվ չի կերել իր օրում
Կաշառքից էլ քաղցր բան:

Հանդիպելիս նա խոսեց
Ընկերաբար, մտերիմ,
Երբ օգնության հարց ծագեց,
Տիկնոջը մոտ վռագեց:

Ծառայում էր բանակում
Ամեն ջահել սովետում,
Հիմա այլ է վիճակը,
Բանակից են խուսափում:

Քամին ծովից անդադար
Հա՛ փչում է սրընթաց,
Հազիվ առնի նա դադար,
Հույս ու հավատ չմնաց:

Խրախճանք է նոր տարվա
Ապագայի վառ հույսով,
Տարին կգա ու կերթա,
Հույսը նորից կմնա:

Տանը լինի երեխա,
Խաղալիքով միշտ խաղա,
Քաղցր, անմեղ իր ձայնով
Հոգուս մեջը գեղգեղա:

Հեռախոսը ավի մեջ,
Ողջ աշխարհին է ավի մեջ,
Շուրջը ոչինչ չի տեսնում,
Իր ողջ կյանքն է ավի մեջ:

Դու միակն ես, սե՛րս վկա,
Ողջ աշխարհում քեզ պես չկա,
Հավատում եմ սրտիս ձայնին,
Մի ծաղկով էլ գարու՛ն կգա:

Դեմքիդ ժպիտ դալարի,
Ամեն անգամ դու արի,
Վարդ շուրթերիդ կրակը
Հոգիս այրի, չի մարի:

Դու միակն ես, աննման,
Կուզեմ առնել անպայման,
Վայ թե հայրդ ինձ չտա,
Ես առանց քեզ ո՞նց մնամ:

Ժամանակը լուռ հնում,
Հույսի բույր է արևում,
Շողին գնա ընդառաջ,
Բախտիդ դուռն է առջևում:

Ախ, ինչքա՛ն քեզ երազեմ,
Մտքով քեզ հետ միշտ վազեմ,
Սրտի գաղտնիք ես ունեմ,
Եկ հանդիպենք, որ ասեմ:

Տաղանդներին ճամփա տվեք,
Անտաղանդը չի՛ կորչի,
Ուր էլ գնա, ամենուրեք
Իրեն հանճար կկոչի:

Հայաստանը լքում են,
Իրենց պատվին՝ թքում են,
Օտար ասիեր գնալով,
Մյուսներին ձգում են:

Մեր հայերը ուր գնում,
Խաչքարեր են միշտ դնում
Եվ հավատքով իրենց հին
Օտարներին զարմացնում:

Մեր հայերը ամեն տեղ,
Թեկուզ ապրեն իրենք նեղ,
Խաչ են շինում, որ աստված
Բերի իրենց հոգուն դեղ:

Նորից եկավ նոր տարին,
Հույսեր տվեց մարդկային,
Բայց մեզ ոչինչ չհասավ.
Մոռացել էր սատանին:

Լուռ ու հանգիստ օր չկա,
Քանի կաշառք առնել կա,
Էլ ո՞նց ապրի մարդ հանգիստ,
Մեկ էլ տեսավ՝ բռնել կա:

Այնքա՛ն հիմա ցրվեցինք
Եվ բիզնեսով տարվեցինք,
Մեր թոռներին, երբ տեսանք,
Ու՞մ տղան ես, հարցրեցինք:

Մեր Նուշիկի թուշիկը
Կարմիր խնձոր նմանի,
Եվ հպարտ է մայրիկը,
Աղջիկ ունի գեղանի:

Հայաստանը դարավոր
Անցյալ ունի փառավոր
Եվ ոգեկանչ Մասիսով
Դառնալու է զորավոր:

Չա՛ն եմ ասում, ջա՛ն լսում,
Էլ ինչի՞ ենք մենք դրսում,
Դու սրտիս մեջ տեղ ունես,
Արի խոսենք մենք ներսում:

Հաշված օրեր մնացին
Ինձ կենդանի մնալու,
Եկեք, տղերք, միասին
Գերեզմանոց տանելու:

Ի՞նչ հաշիշ է, չգիտեմ,
Թմրամոլ եմ, այդ գիտեմ,
Եվ վարակված, անհանգիստ,
Ձկնորսության կշտապեմ:

Ձկնորսության կգնամ,
Թեկուզ մի հատ չբռնեմ,
Այնտեղ երկար կմնամ
Եվ մաքուր օդ կշնչեմ:

Կաքավելով գնում ես,
Ուր գնում ես, մնում ես,
Ե՞րբ պիտ ասեմ, վերջապես,
Իմ սիրասուն գրկումն ես:

Ինչ եղել է անցյալում,
Մնալու է պատմություն,
Բայց գալիս է հաջորդը,
Մերժում է և թալանում:

Սուրբ ծննդի տոներին
Այնքա՛ն ծեսեր ցույց տվին,
Էկրաններին երկնագույն
Հավատացյալ իսկ դարձրին:

Մենք չենք մնա անոթի,
Կապրենք լոթի և փոթի,
Քանի թուրքը կբերի
Բանջար, վարունգ ու լոբի:

Խնոցի ջան, խնոցի,
Տուր մեզ յուզը քո ծոցի,
Յարս այսօր գալու է,
Մեռնեմ շողին վզնոցի:

Ճամփասս ձգվեց քաղաքից
Դեպի գյուղը լեռնային,
Դատարկվել էր կարիքից
Ծաղկունն վայրը հիմնովին:

Ճամփա բացեք դեպ Արարատ,
Ջրհեղեղ է լինելու,
Որ կատարին նրա՝ հանտարդ
Հնար լինի ճեմելու:

Պետությունը, թե ունի
Օլիգարխներ զանազան,
Միշտ կանտեսվեն հոգևոր
Մեր գանձերը սրբազան:

Մի չոփ՝ չոփին չի դրել,
Թրև գալն է միշտ սիրել,
Ո՞նց պիտ ապրի այսուհետ,
Երբ աղջիկ է տուն բերել:

Տարիս գնաց, ես գիտեմ,
Հարկավոր չեմ ոչ մեկին,
Ինչո՞ւ մերոնց խանգարեմ,
Սյուն եմ հիմա ամենքին:

Ով ուզում է, մի խոսքով,
Ընկնել թակարդ զույգ ոտքով,
Գնա բանկից նա պարտքով
Դրամ վերցնի տոկոսով:

Հեռախոսը քանի կա,
Քեզ տիրություն էլ չկա,
Օրուգիշեր դու նայիր,
Որ ափիդ մեջ կչկչա:

Տարիներս անվարան
Գիրկը առան ու տարան,
Բայց չտեսա խոստացած
Ծիրանավառ ապագան:

Տարիները՝ խոսք- խոսքի,
Հա գալիս են ու անցնում,
Ամեն անգամ իմ կյանքին
Մի նոր տարի հրամցնում:

Գիտեմ արդեն ես հաստատ,
Թշնամու դեմ անհրավ
Պիտ պաշտպանենք մենք զենքով
Մեր Արցախը հարազատ:

Տարիներս թե անցան,
Իմ ծոռները չորս դարձան,
Շառավիղս տոհմական
Դարեր կերթա անպայման:

Նոյեմբեր-դեկտեմբեր, 2011 թ.

հունվար 2012 թ.

ԾԱՏՈՒՐԻ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիզմիս հոգուն մեռնեմ,
Հարգանք, պատիվ ինձ տվեց,
Ինձ պես հալալ մարդուն, հրե՛ն,
Դրամներով պարգևեց:

Փողս կտամ խաթուն աղջկաս,
Շավար հագնի կիսանեղ,
Ումի՞ց է նա, ասեք, պակաս,
Որ չերևա ամեն տեղ:

Ես էլ գուցե գիշերը գով
Սիրուն կնոջ փայփայեմ,
Աչքերիս ու փողիս ուժով
Մերն ու սիրտը վայելեմ:

Մի բուռ կյանք է ինձ մնացել,
Դարս գնաց, վերջացավ,
Լուրջ պարզն են ինձ խոստացել,
Որ չունենամ դարդ ու ցավ:

Սոցիալիզմն է մեջքիս կանգուն,
Ինչպես պատը չինական,
Փող կդիզեմ ես զրնգուն,
Որ չիմանամ կան չկան:

ԾԱՏՈՒՐԻ ԳՈՎՔԸ

Գովքը անենք մեր Ծատուրի,
Աշխատանքում չալարի,
Պարզեներով հազար ու մի
Բոյ-բուսաթը դալարի:

Մանդարայից հյուրեր կգան,
Օդորոնջից, Ամտղելից,
Մեր Ծատուրին նվեր կտան
Անգամ երկնի աստղերից:

Ջահել-ջուհուլ պարի կելնեն,
Քեզ էլ կառնեն պարամեջ,
Ախ, Ծատուր ջան, հազա ր երնեկ,
Փառքիդ գովքը չունի վերջ:

Քեզնով, անկեղծ, հպարտ ենք մենք,
Կարոտում են և կանայք,
Բեր բաժակդ, օղի խմենք
Նրանց սիրուն հուր-կրակ:

Փողերդ որ ծոցը դնես,
Կանայք իսկույն կսիրեն,
Մինչ իմանաս որին խանդես,
Ողջ պարզևիդ կտիրեն:

Սիրուհին էլ քո մշտական
Երբեք չի տա քեզ վնաս,
Թեկուզ ունես կին պատվական,
Դոն ժուան էլ կդառնաս:

Կյանքն է այսպես, Ծատուր
ախպեր,
Հին դարերից մինչ հիմա,
Գնա մի շիշ օղի դու բեր,
Պարզևիցդ հուշ մնա:

Սոցիալիզմը քանի որ կա,
Օր-ցերեկով մեր կյանքում
Աջից-ձախից փողոյ կգա,
Հենց պարզևս է վկայում:

ՇՈՒՇՈ

ՄԱՐԳՈ

ԱՐՇԱԳ

ՋԻԼԲԵՐՏ

ՊՈԵՄ

ՇՈՒՇՈՒ ԵՎ ՄԱՐԳՈՒ

ՄՈՒՏՔ

Շաղ հավասա էր Շուշոնն միք
Ուսում առնու ուր մոնճը,
Ադու հոմար օրնիվիր
Մարգոյին էր օնգոճը:

Չաշկին մեճի նստվածկին
Ֆալ պոնար գու Մարգոն միք,
Շուշոնն հավդած աստածին
Ընու խոսկին օտնիվիր:

ՄԱՐԳՈՒ

Գարմուճնիվիր վիր էլավ,
Մոնճդ մդավ ինստիտուտ,
Էպա հիմի տուն փիլաֆ,
Ուղինկ համան էրգու փուր:



Տրգից-մրգից մեգդեղին,
Ուրախընուն, քեյֆ ընին,
Ադ օրենկն ա միր կեղին,
Հարկին, բաղվին Ջիլբերտին:

Հա՛, մոռնունկ հեչ Իշխանին,
Կալուստն ըլլի թամադա,
Կոռնկ Թարգի Եպրեմին,
Քամանչայով համերկ դա:

Է, Արշագին տուն կիդիս,
Ծընն օր լսա քամանչին,
Ինճկան ալ ընու գաբիս,
Բարա բիդի «Քոչարին»:

Մողիկ կուկոն հոնկշողնիդ,
Դեսնուն տող ու զարմընոն,
Բադիվ գուդաս Ջիլբերտիդ,
Դասը օր ալ շադ մնոն:

Անեկտողնիդ բաղմա տուն,
Բահ մը ավայ ծիծաղին,
Օնունդ մըդնու ըմըն դուն,
Զարմըծընա լսողին:

Ալլայ կիդին՝ ջիմարդ իս,
Սեղնին գլի ըմըն ինճ,
Միր մաշտկածը իշտահին
Վախիմ վոտկըն կուկա քիչ:

Ըհըն աշա չաշկին մեճ
Ծիծաղերես Ջիլբերտին,
Բուլգըները պոնած բեչ,
Բակնըրտկին գու էրեսնին:

ՇՈՒՇՈ

Հոկուդ մեռնիմ, Մարգո քույս,
Աճվիս ի վիր դվիր լուս,
Գյանկիս դահա ըղած չէր,
Որ գաղարվեր ասմուն հույս:

Ջիլբերտս օր հիմի կա,
Իսա օրը տող վգա,
Ինչ դիլադ օր տուն ունիս,
Համան բիդի գադարա:

ՄԱՐԳՈ

Հիմի յոնեյդ աշա տուն,
Ախճիկ կդնուշ մի խաթուն,
Հայսնիկ ընինկ, բար խաղոնկ
Ակվընծույըն իրիգուն:

Տա Չայտարին հավնինա,
Կործ շինուշը թող վրաս,
Ըն քշա գու մաշինա,
Քասունուտին ունի խաս:

Քոնի դեղա ուզեծին,
Խոսկը գողրեց եդ նեդեծ,
Ըն չի մերժիլ Ջիլբերտին,
Հարն ալ ունի բաշտոն մեծ:

Բալադի բես դուն ունին,
Բլբլա գու օսկու բես,
Հարուր մետր ա մեգ խալին,
Մաշտ առ գնա մդնուշ նես:

ՇՈՒՇՈ

Քասում ախճիգ հիմի վոյդեխ,
Ներգ ին ալլայ օտկա կլեխ,
Օսկի գնջիլ ունին ճդին,
Օմոն լվուշ ամա չիդին:

Հայսըս բիդի ըլլի քասուկ,
Ծիծաղերես, ասուկ, խոսուկ,
Կեսուրեճը խոսկը լսա,
Կնա ընա ինճ օր ասա:

ՄԱՐԳՈ

Ադ իշտահիդ, Շուշո քույս,
Բադ ճուր խմա հնճուկ լուս,
Աստածդ օր կուզիս ընա,
Սև գադումը տեմը ջվդա:

ՇՈՒՇՈ

Տա ինձի յօր լսա յեճ,
Գուդա կլխուն փետտի բեչ,
Օխտը ադում գեշտա նըն,
Փիշմոն գըլլի ծնվուշն:

Օսկի խոսկեր աստիր տուն,
Ըոռնձ պաշխիշ չիս մնալ,
Աշա իսա քոշիկնուն,
Փայլուն ին ու բսպդուն:

Քոշին հակի ձովը կնա,
Չալում արա աջ ու ծախ,
Ջեյրոն-ջեյրոն տուն ֆլֆլա,
Մաշտուդ սիդը ըյնի վախ:

ՄԱՐԳՈ

Միր մաշտկածըն օկուդ չիկա,
Չին հազ ընիլ մեզի հիչ,
Ըներ կուզին դայմա վոսկա,
Տարձածին սալտ օտկի խիճ:

Քու Արշագոյ լավ մաշտ ա,
Օնիձիս ալ՝ միշտ հաշտ ա,
Կլխուն օյին շաղ խախձիր,
Ներուշի ալ բաղրաստ ա:

Մաշտոյ գեշտար ձովը նա,
Հնոր քիչ մը հոնկշի նա,
Հայս կղնու գու վախուշաղ
Ծուղգաձ էղվոնձ գեշտա՞յդ տա:

Սպիսոց մը կրեծիր,
Քոնի պողպիս ժողվեծիր,
Հնոր մաշտուղ սուղը դաս՝
Օրի ձովը կնաձիր:

Զավալիգը ինչ ըներ,
Գրագն ընգաձ հա գարեր ,
Հայսի մը յոն նստեր նա,
Օնիձուշիդ բատջառ էր:

Հենակ մարը միշտ գասեր.
- Հալալ դրիս մեխկ ըղավ,
Օսկեր, սալա պերելըն
Ադու ծեռկին լղջեծավ:

Ամա արի հասկընոնկ
Քու գավալի Արշագին,
Ուրիշ գնիգ դեսած չեր
Քեզմըն բացի յոխճ գյանկին:

Դոնը տուն չիս պոնըվիլ,
Վիրա գեշտաս Սալսկ, Ռաստով
Դոնիս կու հուն մանդարին,
Պերիս կու բոնիր, կարտոֆ:
Ատկան փարա ի՞նչ գընիս:

ՇՈՒՇՈ

Մոնճըս հիմի Խարկովին
Քասում հակնի, սորվի գու,
Հանգիստ չին դալ բուլգընին,
Փարն ընու դրգիմ գու:

ՇՈՒՇՈՒ ԵՎ ԱՐՇԱԿ
ՇՈՒՇՈՒ

Թեև չունեյ ես մեծ ուսում,
Ախճիգ էյը գյոզալ, քասում,
Ներ օր էշտայ հեդս կուկայդ,
Չիր ու չամիչ ջեբադ գուդայդ:

Օրուկիշեր աճկըդ դնգած,
Վրաս գաշեյդ հալած-հալած,
Օրմ ալ աստիր հայդի Գնձա,
Քեզի գուդոմ պոմը ընձա:

Ես հավդրձի սայի էգա,
Ամա դեսա՝ ինչիկ չիկա
Աստիր՝ հոկիդ չիս խնայիլ
Գարիս-գեպիս մայիլ-մայիլ:

Ես ալ սուսիկ կեդի ախճիկ, 0
Չեյ հասկըննալ դահա ինչիկ,
Աճկիդ ճուրն օր մեմը դեսա,
Աստի՝ աս ա մեզի փեսա:

Սողը էլակ իշչի էգակ,
Գոմմոր հոյսմա կերակ քեթակ,
Ամա սիդը թեզ փափկեծավ,
Աամուն աստավ տեմըս գեծավ.

- Փաշօղծիկ հաճով մաշտ ին,
Հասը լիկն ա ընեծ դաշտին.
Ծաղիկ տարծիր կնա օջիսին ,
Ինչ ալ ուզիս ունին բուճիսին:

Աամուն էլակ իրար առաք,
Դայմա գերակ մեղր ու գարակ,
Հիմի չիդիմ ինչ ըղավ աս,
Օտկա-կլեխ պոնեյս ին թարս:

ԱՐՇԱԿ

Մեղավորը տունիս արա,
Չիլը պեյնիդ չի թյճիլ,
Կուզիս աշխարհն իմնա,
Չիս ալ մեմը տուն խյճիլ:

ՇՈՒՇՈ

Պեյնադ էլլա ծեծըդ լծվի,
Ինչ օր թարս պոն գասիս ինձի,
Իմ սաթըմոք ըղար տուն մաշտ,
Աբրա հեդս խաղադ ու հաշտ:

ԱՐՇԱԿ

Հագար անկամ փիշմոն ըղա,
Ամա ունինկ էրգու դղա,
Ընեծ խաթեր գինոնք գադու,
Ալ մի ըլլիլ տեմըս ճադու:

Ինչ օր ասիմ արա սուսփուս,
Դնըն ինձիկ չելլա տող տուս,
Դղամաշտը ես իմ դոնը,
Շադ լավ կիդիմ կործին պոնը:

ՇՈՒՇՈ

Քու խելկիդ օր աշիմ օրա,
Գարոդ գլլինք հածին չորա,
Մեմ ալ պեյնադ խոսք մը էլլա,
Համան գուդիս ինձմն սիլլա:

Զօր ու կիշեր ջղիս նստաձ
Վիրա վոտկա խմիս կու,
Մանդալինը մեմ ալ առաձ
Շեգ հայսներուն չալիս կու:

Մաշտըս բիղի բախտ օննա,
Ջախտը ֆայդա չի ընիլ,
Թեկուզ լիզուս ալ չոյնա,
Ասող իմ արգոնս դիբիլ:

Հարուստ օճխա քոնի՛ դղա
Իմ էդվոնձս բեչ գաբեծին,
Կրքկլուղըն, ըմն կեղա
Քասումուտինս բադմեծին:

«Աշխարկը տա էլլիս մոն կաս,
Աամուն գյոզալ տուն չիս կդնուլ», -
Քրքրին գու դղակը խաս,
Պայծ չինգարի հոկիս մդնուլ:

Ինչկան գայնը ինձի ծարավ,
Վարն էգոն, վիրն էգոն,
Հայս օր պիրը ծեռկը առավ,
Փեսածուկը համան փախոն:

Տա առնեյ նա ես ուրիշի,
Թարս չէր էշտալ բախտըս
ասմուն,
Մաշտըս լսող գլլեր ինձի,
Ջիլբերտս ալ գառներ ուսում:

Ճիշտ ա, մղավ ըն ինստիտուտ,
Պայծ Բիգոնին շաղ հավդած,
Ընդի չիկար մեզի օկուդ,
Ինստիտուտըն էլավ կնած:

Ինչիկ չիկա ինձի տժվար,
Միտկ ըղածըս գնիմ դայմա,
Իրար խառնած քար ու զարար,
Ես Ջիլբերտիս գուդոմ ֆայդա:

Տա աշխարհը էլլիս մոն կաս,
Ասմուն դդա տուն չիս կդնուլ,
Բոյը էրգն, լիզուն ա խաս,
Խելկը դայիմ՝ աշնոն գնձդուլ:

Թառլան մոնճ ա կլիսա, օտկա,
Ադու հոմար մեռնիմ հոկուն,
Ինչ օր ասիմ, համան գնա,
Թեկուզ ըլլի գրագ շոկուն:

Իմ Ջիլբերտըս ինչկա՛ն օնուշ
Ներագ ունի կլիսուն բահաճ,
Խանկարեծին ընու սովրուշ
Ախճկըները սըյդով պահլաճ:

Դաժե էլավ Մոսկվա կնաճ,
Ջակս ըլլող էր՝ ես չլլեյ,
Շայս բիդու չա աճվին ներգաճ,
Կար օր հուգա ես ջվդեյ:

ՋԻԼԲԵՐՏԻ ՄԱՍԻՆ

Գիտի, որ մի օր
Ուսում կստանա,
Թեկուզ հեռավոր
Գնա Աստանա:

Դիպլոմը ջերփն
Տուն կգա հեռվից,
Տեսնեն Ջիլբերտին,
Փքվեն նախանձից:

Ով աղջիկ ունի
Ընդառաջ կգա,
Առանց չեմչումի
Ջիլբերտին կտա:

Յոթ օրուգիշեր
Կանեն հարսանիք,
Կգան դուռ-դրկից,
Տղա ու աղջիկ:

Ձորեր ու սարեր
Քեֆով կթնդան,
Կպարեն այրեր,
Կերգի թամադան:

Կփորձի մեկ էլ
Ուժերը լարել,
Ինստիտուտ ընկնել
Մարդու պես վայել:

Գլխին ամբարած
Երազներ բազում
Առաջը ընկած
Վազու՛մ են, վազու՛մ:

Ալ չէր ուզիլ դունը էգուշ
Միր Ջիլբերտը Խարկովն,
Եվ շնչեր գու օնուշ-օնուշ
Խախուշկնուն մազերըն:

Տելեգրամը դվավ համան
Բիզոնը միր խորամանկ,
«Մայդ մեռած ա, հասիր, ամա՛ն,
Օրմը ունիս ժամանակ»:

Եվ Ջիլբերտը սայի հավդած,
Սամայոտով Սոխում թռավ,
Վիրա աճվին սրպեր գու թաց,
Շուշո մորը վշտով լցված:

ՋԻԼԲԵՐՏ

Ամբողջ թաղը լաց է լինում,
Ջրհեղեղ է արցունքներից,
Ախր, ինչո՞ւ չէի լսում,
Խոով էի մայրիկից:

Մի աշխարհ էր մայրս Շուշո,
Ոտից-գլուխ իմաստուն,
Հովերի հետ դժբախտ Մշո
Գիշեր-ցերեկ չուներ քուն:

Մղկտում է ցավից գուռնեն
Եվ դավուլն է սնսնգում,
Ինչպե՞ս գնամ մտնեմ դռնեն,
Մորս տեսնեմ դագաղում:

Ջահել հայրս չի դիմանա,
Սրտով խաթուն կին կբերի,
Մեկ էլ հանկարծ թե գինովնա,
Ո՞նց կպարի նա «Քոչարի»:

Առանց Շուշո իմ մամայի
Ի՞նչ եմ անում ուսում, մուսա,
Թե առաջուց իմանայի,
Չէի հիմա ես ավստսա:

Ջեբս դատարկ, սիրտս կոտրած
Ես կմնամ որբ ու անտեր,
Էլ ինչ անեմ գրքեր սերտած,
Կապիկ դառնամ, ընկնեմ հանդեր:

Չորստուղ, աճուղ, կուտեմ մաշմուրկ,
Գնձողուլ-մնձողուլ կանեմ անուշ,
Չունեմ տալիք աշխարհին տուրք,
Ինչ եղել է մնա թող հուշ:

Գնամ ծովը, պառկեմ ափին,
Ալիքների խաղը դիտեմ,
Թող մարմինս այրի արփին,
Անելիքս ես լավ գիտեմ:

Թրև կգամ ամբողջ օրը
Առանց հոգսի, առանց դարդ,
Ափսոս, հաց է ուզում փորը,
Այդ լավ գիտի ամեն մարդ:

ՎԵՐՋԵՐԳ

Բայց Բիզոնը խաբեց իրեն,
Ե՞րբ էր կյանքում ճիշտ ասել,
Մայրը առողջ տանը հրե՛ն,
Պատրաստվում էր հաց ուտել:

Պատմությունը այս իրական
Հիմքեր ունի իսկական,
Վստահ եղեք ամեն խոսքին,
Հեղինակն է ձեր վկան:

SUSԻՍ ՀԱՆԵԼՈՒՎՆԵՐԻՑ

Հանելուկ, համ՝ ավելուկ,
Վրան ծաղիկ, տակն՝ ավելուկ:
(լամպ)

Դերն էգավ քյոնած,
Առաճի պոնը՝ դնգված:
(ինքնատեռ)

Կոնակս՝ կոնագիդ,
Ծուգուլս՝ ծագիդ:
(երկանքքար)

Ց Ա Ն Կ

| | |
|-----------------------------------|-----|
| ՄՆԻՆԵՐ..... | 2 |
| ԴՈՒԵՏ | 65 |
| ՔԱՌՅԱԿՆԵՐ | 70 |
| ԾԱՏՈՒՐԻ ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ | 93 |
| ԾԱՏՈՒՐԻ ԳՈՎՔԸ..... | 94 |
| ՇՈՒՇՈ, ՄԱՐԳՈ, ԱՐՇԱԳ, ՋԻԼԲԵՐՏ...97 | |
| ՏԱՏԻՍ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻՑ..... | 118 |

Միրավան Սևունի

ՄՆԻՆԵՐ

Նկարները Հայկազ Օհանյանի

Սրբազրեց Անահիտ Սահակյանը

Отпечатано в полном соответствии
с предоставленным материалом заказчика.
Компьютерная верстка Д. Шевченко.
Корректурa выполнена заказчиком.

Отпечатано ООО «Лазаревская полиграфия»
354200, Краснодарский край, г. Сочи
п. Лазаревское, ул. Аэродромная, 10.

Подписано в печать 21.03.2012 г. Формат 12,5x17,5
Печать цифровая. Бумага 80 гр/м.
Тираж 100 экз. Заказ №260



Прославленный Герой России летчик-космонавт Максим Сураев для себя считал большой честью сфотографироваться с всемирно известной бизнесменкой Маник, если не верите, автор сборника - свидетель

